

ՆԱՄԱԿ ԱՄՆՊՏ. ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԶ. ՊԱՏՐԻԱՐԻԷՆ

ԱՌ Ն. Ս. ՊՕՂՈՍ Զ. ՍՐԲԶ. ԲԱՀԱՆԱՅԱՊԵՏ

Սրբազան Հայր,

1965ին տեղի պիտի ունենայ առաջին համաշխարհային պատերազմի հայկական ջարդերուն յիսներորդ տարեդարձը:

Պիտի կատարենք ցաւալի յիշատակութիւնը մեծ եղեռնին, ուր գրեթէ երկու միլիոնի հասնող մեր հայրերը, մայրերը, եղբայրներն ու քոյրերը, հալածուած Բրիտանիա եւ իրենց ազգին հանդէպ փարութիւն համար, իրենց ակութեան վտարուած, տեղահանուած եւ աքաղաղուած, ջարդուեցան կամ սովահ մեռան:

Հայ կաթողիկէ եկեղեցին կը հաշուէ այս գոհերուն մէջ ինը եպիսկոպոսներ, հարիւր բանակներ, յիսուներեքը մայրապետներ եւ մօտաւորապէս հարիւր հազար հաւատացեալներ:

Թուրքիոյ մեր տասնեւվեց բեմերէն տասնեւչորսը ամբողջապէս քանդուեցան եւ երկուքը կիսաւեր մնացին:

Մեր բաժանեալ եղբայրներն ալ, եպիսկոպոսներ, կղեր եւ հաւատացեալներ, իրենց բեմերուն մէջ, նոյն վիճակին ենթարկուեցան:

Աւերը տարածուեցաւ հայկական բոլոր գաւառներուն մէջ, որոնց խիտ բնակչութիւններէն վերապրեցան սոսկ այրի կիներ եւ որբեր, մնացորդներ՝ որոնք վայրաժատին ցրուեցան Սփիւռքի մէջ:

Ս. Աթոռը, գրեթէ միակը, մտահոգուեցաւ անոնց վիճակով, անոնց քշուածութեան մէջ, եւ պաշտպան կանգնեցաւ անոնց:

Պատերազմի միամեայ արեւելքներուն առջեւ, եւ ցնցուած հայկական ողբերգութեան առաջին շուկներէն, Բենեդիկտոս ԺԵ. Սրբազան Քահանայապետը խօսքը կ'ուղղէր 28 Յուլիս 1915ին, յոյժ ազնուական եւ մեծապէս յուզիչ կոչով մը, պատերազմի ժողովուրդներուն եւ անոնց պետերուն, ձառնալու համար բռնատիրական ամէն գործ եւ իշխանութեան ամէն գեղծում:

10 Սեպտեմբեր 1915ին, ինքնագիր նամակով մը, ուղղուած Օսմանցիներու Մուհամմետ Ե. Սուլթանին, Սրբազան Պապը դառնօրէն կը գանգատէր Հայոց շատ ցաւալի վիճակին համար, որ Օսմանեան ընդարձակ նահանգներուն մէջ անասելի տառապանքներու էին ենթարկուած. բանտ, աքաղ, սպառնալից, ամբողջ ժողովուրդներու տեղահանութիւններ, դատաւարութեամբ զրկանքներ, քշուածութեան, անօրութեան, մահուան:

Բենեդիկտոս ԺԵ. Քահանայապետի ազնիւ սիրտը նմուշեցաւ մեր ժողովուրդին տառապանքին առջեւ, այն աստիճան, որ Նորին Սրբութիւնը բարձրագոյն իր անգալի ձայնը 1915ի Դեկտեմբեր 6ի Ծիրանաւորներու Խորհրդաժողովին մէջ: Աւերներու կուտակումը յիշեցնելէ ետք, որ տեղի կ'ունենային պատերազմին պատճառով, տասնեւվեց ամիսներէ ի վեր, հակառակ

անոր՝ որ ոչինչ զանց ըրած էր փութացնելու համար խաղաղութեան վերահաստատումը, Քահանայապետը ցաւով կը նկատէր քէ պատերազմը կը տեսնէր տակաւին ցամաքի եւ ծովու վրայ, մինչ ԱՄԵՆԱԹՇՈՒԱՌ ԱԶԳՆ ՀԱՅԱՅ ԳՐԵԹԷ Ի ՍՊԱՌԻ ԿԸ ԲՆԱԶՆՁՈՒԻ:

Նոյն մեծահոգի ծայրագոյն Քահանայապետը արդարութիւն պահանջեց Հայոց համար. 15 Օգոստոս 1917ի իր դիւանագիտական գրութեամբ, ուղղուած պատերազմող ազգերուն, հետեւեալը կը սահմանէր իբրեւ հինգերորդ պայման խաղաղութեան. Ուղղատուութեան եւ արդարութեան նոյն հոգին պարտի առաջնորդել քննութեան հողային եւ քաղաքական միւս հարցերուն, եւ մասնաւորապէս այն ՀԱՐՅԵՐՈՒՆ, ՈՐՈՆԻԿ ԿԸ ՀԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻՆ:

Պատերազմի հետեւորդ տարիներուն, Պիոս ԺԱ. մեծ Քահանայապետը՝ գորովալից, սիրալիր ու կարեկից հայրն եղաւ հայ որբուկներուն եւ որբուկներուն: Զանազան հաւաքեց Պոլսոյ, Փորփուի, Միլանի եւ Թորինոյի մէջ. անոնց տրամադրութեան ներքեւ դրաւ նոյնիսկ Քաթեդրալ-Կանտուֆոյի իր ամրանոցը:

Յիսուս տարիներ յետոյ, Հայերը, որոնք բնաջնջումի ենթարկուած էին, շարունակեցին գրաւել իրենց համեստ տեղը աշխարհիս վրայ, այն մնացորդներով՝ որոնք վերապրեցան իրենց նախնիներու եւ հայրերու շարքերէն, եւ կը ջանան արժանի ըլլալ իրենց հաւատքին ու հայրենիքին:

Իրենց սրտերը կը շարունակեն բաբախել ամենախոր երախտագիտութեամբ հանդէպ Ս. Աթոռին, որ Հայոց պատմութեան ամէնէն եղբարական պատմութեան, իրենց միտքարիչ ու նեցուկ կանգնեցաւ, եւ պահանջեց որ անոնց արդար իրաւունքը իրագործուի:

Սրբազան Հայր,

Մեր գոհերուն յիշատակութիւնը՝ այս յիսնամեակին առիթով՝ անտարակոյս պիտի մղէ հայ ժողովուրդը նմանելու իր հայրերուն եւ իր նախնիներուն, անոնց անփակտելի փարութեամբ հանդէպ Բրիտանիա, եւ օրինաւոր սիրոյն մէջ՝ նկատմամբ հայրենիքին:

Ինչպէս մեր մեծ դժբախտութեան օրերուն, նաեւ այսօր մեծ միտքարիւն պիտի գգայինք, եթէ Զեր Սրբութիւնը բարեհաճէր միանալ մեզի եւ մեր բաժանեալ եղբայրներուն, այս յիշատակութեան մէջ, աղօթելով մեր գոհութեան համար, եւ մեզի բացառիկ պատիւ ընելով սփոփանքի եւ օրհնութեան իր օգնութեամբ պատգամով: Բոլոր Հայերը խորապէս գգացուած պիտի ըլլան անով:

Զեր Գահին առջեւ խոնարհած, կը հայցեմ առաքելական Զեր օրհնութիւնը՝ ամբողջ հայ ժողովուրդին վրայ, եւ կը խնդրեմ, Սրբազան Հայր, որ բարեհաճիք ընդունիք խորին յարգանքիս, անփակտելի փարութեամբ եւ կատարեալ հպատակութեամբ, որով պատիւն ունիմ մնալու

ամենախոնարհ եւ ամենահնազանդ որդի

Զերդ Սրբութեան

ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԶ. ՊԱՌԱՆԵԱՆ

Կաթողիկոս-Պատրիարք

Տառն Կիլիկիոյ

Հոռմ, 24 Հոկտեմբեր 1964